Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԽՍՀՄ Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք! ՀԽՍՀ

655(47.9)
Ц-76

...ից կարեվորը մրցակցության մեջ այն է,
... նա հիմնական հեղաշրջում է կատարում
...դկանց դեպի աշխատանքն ունեցած հա-
...յքներում, նա աշխատանքը վերածում է պախարակելի ու ծանր լծից, ինչպես նա համարվում եր առաջ, պատվի գործի, փառքի գործի, խիզախության ու հերոսության գործի:

ՍՏԱԼԻՆ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ 2-ՐԴ ՀԱՎԱՔԻ

6—9 ՓԵՏՐՎԱՐԻ 1931 Թ.

Հ. Հ. Դ-Ի-Վ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1931 թ

1 MAR 2010

10 JUL 2013

40 902

1 MAR 2010

355 (47.9)

Կ-76

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊ. 6323 (Բ)
ՊԱՏՎԵՐ 1835
ՏԻՐԱԺ 800

# ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀԵՂ.—ՌԱԶՄ. ԽՈՐՀՐԴԻ

# ՎՈՐՈՇՈՒՄ № 9

16-ին փետրվարի, 1931 թ.

Կովկասյան Կարմրադրոշ Բանակի հարվածայինների 2-րդ վորոշիլովյան հավաքի վորոշումները, վոր ընդհանրացնում են զորամասերի վիթխարի փորձը, հանդիսանում են ծավալուն գործարար կոնկրետ ծրագիր սոցիալիստակ. մրցակցության ու հարվածայնության հետագա կատարելագործման ու ընդարձակման համար: Հավաքի վորոշումների կատարումը կապահովի սոցմրցակցության վերելքը դեպի նոր, ավելի բարձր աստիճանը և այդպիսով իսկ կտա զորամասերի մարտական ուսուցման մեջ վորակի ու տեմպերի նոր աճում:

Բացառիկ կարեվոր նշանակություն տալով ԿԿԲ հարվածայինների յերկրորդ հավաքի վորոշումներին, ԲԱՆԱԿԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե.—

1. Զորամասերի հրամատարներին ու կոմիսարներին՝ ապահովել հավաքի վորոշումների ամբողջ պետկազմի ու բոլոր կարմիր բանակայինների կողմից մշակումը:

2. Անմիջապես անցնել հավաքի վորոշումների [illegible]ման:

3. Սահմանել բանակային անցողիկ մրցանակ,—ընկ. Վորոշիլովի գեղարվեստական նկարը,— ամեն տարի մանյովրներից հետո տալով այն բանակի լավագույն հարվածային զորամասին:

4. Ռացիոնալացման բանակային բյուրոյին՝ վոչ ուշ քան փետրվարի 23-ը տալ ռացիոնալիզատորներին և գյուտարարներին պատվեր 1931 թվի համար: Մինչեվ մայիսի մեկը կազմակերպել ռացիոնալացման ու գյուտարարության բանակային ցուցահանդես:

5. Բանակի Քաղվարչությանը՝ հրատարակել սոցմրցակցության ու հարվածայնության լավագույն օրինակները լուսաբանող բրոշյուր:

Հեղ-Ռազմ. Խորհուրդը համոզված է, վոր հարվածայինների յերկրորդ համաքի վորոշումները կստեղծեն խանդավառության, նախաձեռնության ու հեղափոխական ստեղծագործության մի նոր հուժկու ալիք կարմիր բանակայինների ու պետկազմի ամենալայն խավերում, վոր Կովկասյան կարմրադրոշավորը համաքի վորոշումների հիման վրա ավելի յեվս արագ տեմպերով կբարձրացնի իր մարտական կորովը և ամբողջովին կկատարի այն պարտավորությունները, վոր հանձն է առել Բաքվի պրոլետարիատի հետ կնքած սոցմրցակցությամբ:

ՀԿԿԲ ՀԵՂ.-ՌԱԶՄ. ԽՈՐՀՈՒՐԴ.
Ժամ. Զորահրամատար՝ ՍՄՈԼԻՆ,
ՀՌԽ անդամ և ՔՎ պետ՝ ԻՊՊՈ



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ժամ. Զորահր. ՍՄՈԼԻՆ
ԿԿԲ ՔՎ պետ՝ ԻՊՊՈ

# ԲԱՆԱՁԵՎ

Ընդունված Կովկասյան կարմրադրոշ Բանակի հարվածայինների 2-րդ վորոշիլովյան համաքի կողմից ընկ. Սմոլինի՝ «Սոցիալիստական մրցակցությունը, հարվածայնությունը ու մարտական պատրաստությունը» զեկուցման առթիվ.

## I. ՅԵՏ ՉՄՆԱԼ ԲՈՒՌՆ ԱՃՈՂ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԿՐԻ ՏԵՄՊԵՐԻՑ

1. Խորհուրդների յերկիրը 1931 թվին ավարտում է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: ԽՍՀՄ բուռն տեմպերով առաջ է շարժվում դեպի սոցիալիզմ, հաղթահարելով բոլոր դժվարությունները, վճռականապես կռվելով բոլոր յերանգների ոպորտունիստների դեմ:

Մենք սոցիալիզմ ենք կառուցում իմպերիալիստական հարձակման հարաճուն սպառնալիքի պարագայում. յերկրի ներսում դասակարգային պայքարի սրման պայմաններում, վոր առաջացել են սոցիալիստական ծավալուն հարձակումից:

Այստեղից էլ խնդիր է առաջանում՝ բոլշեվիկյան տեմպերով, հնգամյակի 3-րդ վճռական տարվա պլանի 100 տոկոսային կատարումով, բարձրացնել ԽՍՀՄ պաշտպանունակությունը,

համառորեն կոփել Կարմիր բանակի մարտական կորովը։

2. Կարմիր բանակը, որը մեծագույն պատասխանատվություն է կրում սոցիալիստական շինարարության պաշտպանության նկատմամբ, ներկայումս անցնում է լարված բարդ ուսուցման շրջան, տեխնիկական վերակառուցման շրջան, որը տեղի յե ունենում յերկրի հաջող սոցիալիստական ինդուստրացման հիման վրա: Կարմիր բանակի մարտունակության հետագա աճման հիմնական խնդիրներն են.

ա) մարտի բարդ ձևերի տիրապետումը՝ մարտավարական ու օպերատիվ արվեստի բարձրացումը, դյուրաշարժության բարձրացումը.

բ) ռազմական տեխնիկայի տիրապետումը. նրա ուսումնասիրումը, խնամումն ու օգտագործումը.

գ) գերազանց տոկուն, տեխնիկապես ու մարտավարականապես գրագետ մարտիկի մշակումը.

դ) գերազանց հրաձիգի մշակումը, որը լիովին տիրապետել է հրաձգությունների նոր կուրսին.

յե) կարգապահության ամրացումը. «մարտունակության վրա ազդող վոչ մի զանցանք» լոզունգի իրականացումը:

Այս խնդիրների հաջող կատարումը կարող է ձեռք բերվել միայն Կարմիր բանակի ամբողջ անձնական կազմի՝ կուսակցության գլխավոր գծի շուրջը համախմբման հիման վրա, դասակարգային աչալրջության բարձրացման և պրոլետա-



րական ինտերնացիոնալ միասնության ամրացման հիման վրա: Կարմիր Բանակը պարտավոր է աշխատել մարտական լարված տեմպերով, հավասարվելով սոցիալիստական յերկրի պրոլետարական տեմպերին:

Այստեղից ել բղխում է Կարմիր բանակի շինարարության մեջ սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության բացառիկ հսկայական նշանակությունը:

## II. ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՐԱ

3. ԿԿԲ հարվածայինների առաջին հավաքից հետո անցած տարին բնորոշվում է սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության զգալի աճումով և այդ հիման վրա ամբողջ մարտական պատրաստության վորակի բարելավումով ու տեմպերի արագացումով:

Մենք ունենք հարվածայիններ՝ հնգամյակի 3-րդ տարվա անվան, Լենինի անվան, Վորոշիլովի անվան, Բագվի պրոլետարիատի անվան: Հարվածայնության շաղկապումը որվա կարեվորագույն քաղաքական անցքերի հետ, այդ մի նոր, արժեքավոր յերևույթ է մեր հարվածային շարժման մեջ:

Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը դարձել է մարտական կատարելագործման, դասակարգային համախմբման ու սոցիալիստակ. դաստիարակության մի հուժկու և անխզելի մեթոդ: Հիմնականում հաղթահարված է մրցակցության ֆորմալիստական թերագնահատումը, այդ ըն-նադավառում յեղած «պոռչական» արտահայտու-

թյունները։ Մրցակցությունը գալիս է վարից, ամուր հենվելով մասսաների խանդավառության, նախաձեռնության ու ակտիվության վրա։

Կարմիր բանակայինների ու պետկազմի սոցիալիստական մրցակցության մասսայական թափը վկայում է նոր իսկական կոմունիստական վերաբերմունքի մասին դեպի աշխատանքը և ուսուցումը, հիմնվում է դասակարգային գիտակցության աճման վրա, կարմիր բանակայինների ու պետկազմի ամենալայն խավերի՝ բոլշևիկյան կուսակցության գլխավոր լենինյան գծի ամենասերտ համախմբման վրա,—մի գիծ, որ ապահովում է մեր յերկրում սոցիալիստական շինարարության հաղթական ավարտումը։

4. Կարմիր բանակի տեխնիկական վերակառուցման ետապն ու այդտեղից բխող մարտական պատրաստության նոր բարդ խնդիրները առաջադրում են սոցիալիստական մրցակցությանն ու հարվածայնությանը՝ ավելի բարձր աստիճանի վրա բարձրանալու, մրցակցության բարձրագույն ձևերը զարգացնելու անհրաժեշտությունը։

Սոցմրցակցությունն այդ հատուկ պատասխանատու ետապում պետք է ապահովի մարտական պատրաստության պլանի բարձրորակ կատարումն ու գերակատարումը, ժամանակին մերկացնելով և կանխելով ուսուցման մեջ հնարավոր թերությունները ու ճեղքվածքները։

Հարվածայինը, լինելով անձնուրաց մարտիկ կուսակցության գլխավոր գծի համար, հնգամյակը 4 տարում կատարելու համար, համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար, պրոլետարական ինտերնացիոնալիզմի համար,



պետք է վճռականապես որն ուրին պայքարի կուլակային տրամադրությունները զորանոց մտնելու դեմ, պետք է պայքարի հաղթական սոց․ շինարարության գաղափարների պրոպագանդի համար, Կարմիր բանակի շարքերի համախմբվածության համար, ընդդեմ բոլոր մեծապետական ու ազգայնական տրամադրությունների․ Անհրաժեշտ է հասնել այնպիսի դրության, որ բանվորներից ու կոլխոզնիկներից յուրաքանչյուր կարմիր բանակային դառնա հարվածային և յուրաքանչյուր գյուղացի կարմիր բանակային—հարվածային պետք է դառնա կոլխոզնիկ։

Անհրաժեշտ է մինչև տարվա վերջն ընդգրկել սոցմրցակցությամբ կարմիր բանակայինների ու պետկազմի 100 տոկոսին, իսկ հարվածայնությամբ կարմիր բանակայինների ու պետկազմի հիմնական մասսային։ Ավելի լայն ծավալել մրցակցությունը մարտիկի քաղաքական դաստիարակության բնագավառում (քաղպարապմունքների, կուսուսի լավագույն յուրացում, կուսակցության ու խորհրդային իշխանության առանձին որոշումների լավագույն մշակում և այլն)։

5. Սակայն սոցմրցակցության ու հարվածայնության անցումը նոր ավելի բարձր աստիճանի անհնար է առանց հաղթահարելու այն թերություններն ու բյուրոկրատական խեղաթյուրումները, որ տակավին տեղի ունեն այդ շարժման մեջ.

ա) կեղծ հարվածայնության, զորահանդիսայնության, աչքակապության, վատառողջ ռեկորդսմենության փաստեր․

բ) իրեն հարվածային հայտարարելն առանց

պատշաճ պատրաստության, վոչ կոնկրետ պայմանագիր կնքելը, առանձին փաստեր հարվածայնությունը վերից հաստատելու, անբավականաչափ ոգնությունը յետ մնացողներին.

գ) վոչ բավականաչափ ղեկավարությունն ու կոնտրոլը.

դ) քանակի յետևվից ընկնելն ի վնաս վորակի.

յե) մրցակցությունը նրա բարձրագույն ձևի —հարվածայնության հետ շաղկապել չկարողանալը. անհատական մրցակցության ու հարվածայնության բացասումն ամբողջ զորամասը հարվածային հայտարարելիս.

զ) սոցմրցակցության թույլ ծավալումը ԿԿԲ առանձին զորամասերի միջև և այլ հրջանների զորամասերի հետ.

է) փորձի վոչ բավականաչափ փոխանակումը սոցմրցակցության կազմակերպման, ձևերի, մեթոդների ու ղեկավարության ասպարեզում:

## III. ԲԱՐԵԼԱՎԵԼ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐԱԿԸ

6. Ամբողջ պետկազմի ու քաղապարատի և կուսկազմակերպության բոլոր ողակների կողմից սոցմրցակցությանն ու հարվածայնությանը ցույց տված ղեկավարության վորակի բարելավումը հանդիսանում է վճռական մոմենտ այդ մասսայական շարժման հետագա ծավալման ու վորակի աճման համար: *Այստեղ յեղած հառաջադիմությունը միանգամայն անբավարար է: Պահանջվում է համառորեն կատարել ԲԳԿԲ 2 ադխոպ-բոպխորհրդակցության վորոշումները.—*

*« Սոցմրցակցության ընդհանուր ղեկավարությունը կենտրոնացնել հրամատարության ու քաղմարմինների ձեռքում: Առանձնապես անհրաժեշտ է բարձրացնել պետկազմի ղեկավար դերը, հասնելով այնպիսի բեկման, վոր պետկազմը գործով կառուցի զորամասի մարտական ուսուցման իր ամբողջ աշխատանքը սոցմրցակցության ու հարվածայնության հիման վրա: Անհրաժեշտ է վճռականապես կռվել այն դրության դեմ, յերբ սոցմրցակցության ղեկավարության մեջ պետկազմը հանձն է առնում միայն տեխնիկական ղեկավարի դերը: Կուսկազմակերպությունը, ղեկավարելով ու գլխավորելով սոցմրցակցությունը, վորպես մասսայական շարժում, պետք է հատուկ ուշադրություն դարձնի սոցմրցակցության մեջ պետկազմի կազմակերպչական դերի բարձրացման վրա...»:*

*Կոնկրետ անհրաժեշտ է.*

ա) հասնել սոցմրցակցության ու հարվածայնության մեջ պետկազմի 100 տոկոս մասնակցության. *Ներգրավել սոցմրցակցության շտաբներին ու վարչություններին: Այդ նպատակով. հասնել պետկազմի յուրաքանչյուր անձի կողմից այն պարտականությունների պարզ ըմբռնման, վոր իր վրա յե դրվում մրցակցության ղեկավարության մեջ. պետկազմի ժողովներում դնել լավագույն ստորաբաժանումների հարվածային հրամատարների հաշվետվությունները: Պետկազմի մրցակցությանը ցույց տված մասնակցությունը սիստեմատիկորեն լուսաբանել ակմբի միջոցով: Գործադրել կարմիր բանակայինների կողմից պետկազմին մրցակցության հրավիրելը: Կուսակցական հրամատարը պետք է լինի առաջավորը մրցակցության ու հարվածայնության մեջ և որինակ ծառայի անկուսակցական պետկազմին.*

բ) պետկազմը, յելնելով ուսուցման և յետ մնացող տեղամասերն առաջ քաշելու խնդիրներից, ժամանակին պետք է առաջադրի մրցակցության վերաբերյալ կոնկրետ հարցեր՝ աստիճանի, ամսվա, դեկադի, օրվա, պարապմունքի համար պետք է տա ստույգ նորմաների ցուցանիշներ, կոնկրետացնի այդ ցուցանիշները համաձայն իր ստորաբաժանման, համաձայն յուրաքանչյուր պարապմունքի:

գ) պետկազմը չպետք է անցկացնի վոչ մի վերլուծում, ուսուցման վոչ մի ամփոփում, առանց հաշվի առնելու սոցմրցակցության, հարվածայնության արդյունքները: Կարմիր բանակայինների հետ տարվող վերլուծումների ժամանակ արդյունքների ամփոփմանը մասնակից դարձնել հարվածայիններին, ուրիշ ստորաբաժանումների պատգամավորներին, բրիգադի անդամներին և այլն: Հառաջադիմության ստուգման ժամանակ հատուկ ուշադրություն նվիրել հարվածայիններին ու մրցակցող կարմիր բանակայիններին ու պետկազմին, համեմատելով նրանց հաջողությունները չմրցակցողների նվաճումների հետ և բոլոր ստորաբաժանումների սեփականությունը դարձնելով, թե ինչ միջոցներով են այդ հաջողությունները ձեռք բերված:

դ) կուսկազմակերպությունները պետք է ամեն կերպ ուժեղացնեն մրցակցությանը ցույց տված իրենց ղեկավարությունը, գլխավորեն այն, վորպես մասսայական շարժում: Ղեկավարությունը պետք է լինի ոպերատիվ ու ճկուն: Դրա համար առաջին հերթին ակտիվացնել կուսբյուրոների մարտական պատրաստության սեկտորների ու



մասսայական աշխատանքը, միաժամանակ հայտաբերելով մրցակցության խեղաթյուրումները ու նրանց հաղթահարման շուրջը մոբիլիզացիայի յենթարկելով մասսային.

յե) լիովին իրացնել՝ «կոմունիստներն ու կոմյերիտականները 100 տոկոսով հարվածայիններ» լոզունգը, սիստեմատիկաբար քննարկել սոցմրցակցության ու հարվածայնության հարցերը, ինչպես նաև դնել կուսակցական ու կոմյերիտական հարվածայինների անհատական հաշվետվություններ կուսբյուրոներում, կուսակցության ու կոմսոմոլի բջիջների նախագահություններում ու ժողովներում.

զ) «սոցիալիստական մրցակցությունը հեղափոխական գործարար ինքնաքննադատության արտահայտությունն է» (Ստալին): Կուսկազմակերպությունների մշտական ու անդուլ ղեկավարությամբ ինքնաքննադատությունը պետք է ուղղել ժամանակին հայտաբերելու ու կանխելու հարվածային ուսուցման թերությունները, կեղծ հարվածայնության և մրցակցության մեջ յեղած այլ և այլ բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ կռվելու համար:

Կուսկազմակերպությունները պետք է ամեն կերպ զարգացնեն աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսին են՝ առաջարկություններ հավաքելը, հասարակական բուքսիրը, շրջանցիկ բրիգադները, սոցմրցակցության կոնտրոլի ու ստուգման զանազան ձևերը: «Սոցմրցակցության կարգով» ղեկավարությունը փոխարինելու կամ զինվորական պահանջկոտությունն իջեցնելու յուրաքանչյուր փորձ պետք է գտնի ամենախիստ դիմադրություն:

# IV. ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

7. Սոցմրցակցության հաշվառման վճռական խնդիրը պետք է լինի՝ մրցակցության իսկական գործնական ազդեցության վորոշումը ուսուցման արդյունքների վրա: *Առանց դրան միանգամայն կորչում է մրցակցության ու հարվածայնության նշանակությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է.*

*ա) Հասնել նրան, վոր յուրաքանչյուր պայմանագրի կատարում յուրաքանչյուր մրցակցող կարմիր բանակայինի ու ստորաբաժանման կողմից ստուգվի վոչ միայն պայմանագրով սահմանած վերջնական ժամկետում, այլ հենց մրցակցության ընթացքում: Սոցմրցակցության արդյունքները ամփոփել ըստ դեկադների, ըստ աստիճանների, յուրաքանչյուր դաշտային պարապմունքից հետո և ժամանակին հասցնել մարտիկին:* Մրցակցության և ամփոփումների կատարման միջև չպետք է լինի վոչ մի խզում:

*բ) սահմանել սիստեմատիկ ինֆորմացիա մրցակցող կարմիր բանակայինների ու ստորաբաժանումների միջև, ինչպես նաև հասարակական կոնտրոլ մրցակցության ընթացքի նկատմամբ (մրցակցության տախտակներ, անհատական հաշվառման քարտեր ու թերթիկներ, պատվիրակների փոխանակում, մարտիկների կողմից ընտրված ժամանակավոր հանձնաժողովներ, զեկուցումներ զորամասի ժողովներում, մրցակցության ընթացքի սիստեմատիկ լուսաբանում թերթում և այլն): Սոցմրցակցության ռեալ արդյունքների հաշվառման համար, բացի ուսուցման պրոցեսի ընթացքում հրամատարի ստուգումներից, գործադրել*



*այնպիսի ձևեր, վորոնք հնարավորություն կտան վորոշելու հարվածայինների և վոչ հարվածայինների իսկական հառաջադիմությունը (քաղմարտեր, ռազմականացված եստաֆետներ, ինքնաստուգման յերեկոներ և այլն):*

# V. ՊԼԱՆԸ ՄԱՐՏԻԿԻՆ ՀԱՍՑՆԵԼԸ

8. *Մարտական պատրաստության պլանը մարտիկին հասցնելը, վորով ապահովվում է մարտական պատրաստության խնդիրները նրա կողմից գիտակցորեն կատարելը, հանդիսանում է վճռական գործոն հաջող սոցմրցակցության ու հարվածայնության համար:*

Այդ բնագավառում կենտրոնական խնդիրներն են՝ *մարտիկին պլանը հասցնելու վորակի բարձրացումը, այդ աշխատանքում վորոշ սիստեմի սահմանումը, ստուգումն այն բանի, թե ինչ չափով, ինչպես է պլանը հասկացվում և յուրացվում բոլոր մարտիկների կողմից:*

Անհրաժեշտ է.

*ա) ժամանակին մասսայականացնել շրջանի (ձմրան, ամրան), աստիճանի, դեկադի, օրվա և յուրաքանչյուր պարապմունքի պլանը: Այդ նպատակով ուսուցման խնդիրները պետք առավելագույն չափով կոնկրետացվեն, ըստ հնարավորին արտահայտվեն կոնտրոլ թվերով: Միաժամանակ անհրաժեշտ է, հաշվի առնելով տվյալ ստորաբաժանման մեջ ուսուցման հիմնական ճյուղերի դրությունը, ուշադրությունը կենտրոնացնել յետ մնացող տեղամասերի վրա:*

*բ) կրտսեր հրամատարին պատասխանատու...*

դարձնել ուսումնական ժամվա, որվա պլանը, իսկ դասակի, վաշտի հրամանատարներին՝ դեկադի, աստիճանի պլանը մարտիկին հասցնելու համար: Որվա ու դեկադի պլանը հասցնելը պետք է ուղեկցվի կոնկրետ ցուցումներով, թե ինչ նյութերով պետք է պատրաստվել հերթական պարապմունքներին:

դ) Նպատակահարմար համարել բոլոր մասերում դեկադային ժամեր մտցնելը, որը անց են կացվում դեկադի 9-րդ օրը:

ե) ուսումնասիրել հենց իրենց՝ բանակայինների ձեռքով հնգօրյա պլանը կազմելու փորձը:

Մարտական պատրաստության պլանով առաջադրած կոնկրետ խնդիրների կատարում պարունակող սոցմրցակցության պայմանագրերը պետք է նույնպես օգտագործվեն այդ պլանների մասսայականացման համար:

Պայմանագիրը պետք է լինի կոնկրետ, կարճառոտ, նա պետք է դնի տվյալ ժամանակաշրջանի մարտական ուսուցման կարևորագույն խնդիրները, ճիշտ մատնանշի մրցակցության ժամկետները․ դասակում, ջոկում միանգամայն հրաժարվել ամբողջ աստիճանի համար պայմանագիր կնքելուց (տես կցված սխեմաները):

## VI. ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՊԼԱՆ

9. Մարտական պատրաստության հանդիպական պլանը վորն ապահովում է կարմիր բանակային մասսայի ու պետկազմի ակտիվության ու ստեղծագործության առավելագույն մոբիլիզացիան, մարտական պատրաստության պլանների կատարումն ու գերակատարումը և մարտիկների



37736

պատասխանատվության բարձրացումն իրենց պատրաստության համար, պետք է ամենամոտ ժամանակում դառնա մրցակցության մարտական վճռական ձևերից մեկը, մարտապատրաստության հիմնական ողակը․

ա) Հանդիպական պլանի հաջող ծավալման կարևորագույն նախադրյալները հանդիսանում են նրա օպորտունիստական թերագնահատման վերացումը («տրված է վերից պլանը, դե՛, արդեն բավական է»), մասսայական հարվածային ու ռացիոնալական շարժում ունենալը զորամասում կարմիր բանակայինների ու պետկազմի միջև (մարտական ուսուցման ընթացքի հարցերի վերաբերյալ) և հրամանատարական կազմի ակտիվ ղեկավար մասնակցությունը հանդիպական պլանի մշակման մեջ.

բ) Հանդիպական պլանի հիմնական խնդիրները՝ կարող են լինել․—1․ ուսուցման փորակի բարձրացումը (կոնտրոլ թվերի բարձրացում) սահմանված ժամկետների պահպանման պայմանով․ 2․ ժամկետների կրճատումը՝ փորակի կատարման պահպանությամբ և 3․ միաժամանակ յերկու խնդրի կատարումը․

գ) Հանդիպական պլանի նման ըմբռնումը բացառում է պրակտիկայում տեղի ունեցած այն դեպքերը, յերբ հանդիպական պլանը փաթաթում են վերևից, կամ հապճեպ կերպով առաջադրում են ժողովներում «գերակատարող» ցուցանիշներ, առանց մանրամասն կերպով նախապես ստուգելու դրանց կատարման ռեալ հնարավորությունները:

Հանդիպական պլանը պետք է [illegible] մշակել, ռացիոնալիզատորների, հարվածայինների, գյն-

թղթակիցների խմբակներում, կուսակցության ու կոմսոմոլի բջիջների կողմից, բոլոր մարտիկների կողմից, դրվի ի հաստատություն դասակի, վաշտի, գնդի ընդհանուր ժողովում և այնուհետև արդեն հաստատվի հրամանատարության կողմից։

դ) հանդիպական պլանի արդյունքով նվաճած ժամանակը կարող է օգտագործվել զորամասի հայեցողությամբ.— լավագույն ձևով տեխնիկան յուրացնելու համար, դաշտում մարտավարական պատրաստությունը բարձրացնելու համար (ըստ հրամանատարության լրացուցիչ պլանի), հանրակրթական պատրաստությունը բարձրացնելու համար և այլն։

## VII. ՅԵՏ ՄՆԱՑՈՂՆԵՐԻՆ ՈԳՆԵԼ, ԿԵՂԾ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ ՄԵՐԿԱՑՆԵԼ

10. «Սոցիալիստական մրցակցությունն ասում է. ոմանք աշխատում են վատ, մյուսները լավ, յերրորդն՝ ավելի լավ. հասիր լավագույններին և ձեռք բեր ընդհանուր վերելք» (Ստալին)։ Յելնելով այս դրությունից, մրցակցության ընթացքում աճեցին և ամրացան լավագույններին հավասարվելու, յետ մնացողներին օգնելու ձևերն ու մեթոդները, որպես անհավասարաչափ աճման վերացման մեթոդներից մեկը։

Յետ մնացողներին օգնելու համար գործադրել.

ա) առաջավորների անհատական շեֆությունը յետ մնացողների վրա. լավագույն ստորաբաժանումների շեֆությունը յետ մնացող ստորաբաժանումների վրա.



բ) յետ մնացող խմբակների, փոխադարձ օգնության բրիգադների կազմակերպում.

գ) յետ մնացողների ու «շեֆերի» խորհրդակցությունների անցկացում.

դ) հավաքը հանձարարում է լայն չափով գործադրել միջանցիկ բրիգադներ. միջանցիկ բրիգադները ջոկվում են լավագույն հարվածայիններից զանազան մասնագիտության սպետկազմից ու կարմիր բանակայիններից, ստանում են ճիշտ խնդիր, որոշ ժամկետ, ընդգրկում են միևնույն պրոցեսի օղակները։ Հրամանատարությունը որոշում է բրիգադների աշխատանքի օբյեկտները, նրանց ընթացուղիները (մարշրուտները) և նրանց խնդիրների համապատասխան նշանակում է ղեկավարներ։ Միջանցիկ բրիգադի աշխատանքն անհրաժեշտ է լուսաբանել գնդային մամուլի և բյուլետենների միջոցով.

յե) անհրաժեշտ է հասնել նրան, որ ավելի արագ վերացվեն գոյացած պարտքերը, մանավանդ անհատական պարտքերը (1–2 օրում).

զ) ավելի լայնորեն օգտագործել յետ մնացողների վրա հասարակական ազդեցության մեթոդները. ագիտ-դատ, սև տախտակ, թռուցիկ միտինգ, ինքնաստուգման յերեկոներ, թռուցկներ և այլն։

Հավաքը սրում է ուշադրությունն այն բանի վրա, որ անհրաժեշտ է վճռական պայքար մղել կեղծ հարվածայնության դեմ, որը վարկաբեկում է ամբողջ սոցմրցակցությունը, խախտում է հարվածայինների հետագա ընդարձակումը։ Դատապարտելով, որպես վնասակար առաջարկներ այն մասին, թե հարկավոր է միաժամանակ կատարել հարվածայինների շարքերի զտում,

Հավաքն առանձապես չեշտում է կեղծ հարվածայիններին սիստեմատիկորեն մերկացնելու և իրենց ստանձնած պարտավորությունները չկատարողներին հարվածայինի կոչումից ժամանակին զրկելու կարևորությունը։ Կեղծ հարվածայնության դեմ պայքարի համար անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ կարմիր բանակային հասարակայնությունը։

## VIII. ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ Ի ՍՊԱՍ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

11. *Ռացիոնալացման շարժումը, ապահովելով ամենից նպատակահարմար կերպով (մարտական պատրաստության ու քաղաքական ուսուցման համար) հրամատարի ու կարմիր բանակայինի աշխատանքային ժամանակի օգտագործումը, ուսուցման մեթոդիկայի բարելավումը և նյութական մասի օգտագործումն ու խնամումը հանդիսանում է մի հուժկու միջոց՝ ուժեղացնելու մարտական պատրաստության տեմպերը և ուսուցման խնդիրների լուծման համար պատշաճ հաջողություն ձեռք բերելը ավելի խտացրած ժամկետներում և ուժերի ու միջոցների նվազագույն ծախքով։*

*Ռացիոնալացման շարժումն իր խնդիրը կարող է կատարել միայն այն պայմաններում, յերբ դրան տրվի* մասսայական բնույթ, *նրան ներգրավվեն կարմիր բանակայիններն ու պետկազմը։*

*Մասսայական ռացիոնալացման ու գյուտարարական շարժումը պետք է վճռական հարված հասցնի ուսուցման ու կենցաղի կազմակերպման անփութությանը, աշխատավորական ժամանակի չխնայողությանը և տեխնիկայի անփույթ և անխնամ վերաբերմունքին։*

Ռացիոնալացումը պետք է դառնա հարվածային շարժման անխզելի մասը։

*«Կրասնայա Զվեզդա» թերթում հայտարարված կոնկուրսը ռացիոնալացման և գյուտարարության համար, անհրաժեշտ է օգտագործել լայն չափով՝ ներգրավելու համար կարմիր բանակայիններին ու պետկազմին ռացիոնալացման շարժմանն ու գյուտարարությանը և հանդիսական պլանի հիման վրա առաջարկների լայն հավաքի համար։*

*Այդ աշխատանքը պետք է կատարվի հետևյալ լոզունգով՝* «յուրաքանչյուր հարվածային— ռացիոնալիզատոր, յուրաքանչյուր ռացիոնալիզատոր-հարվածային»։

12. *Ռացիոնալացման շարժման վճռական ծավալումը, մի շարժում, վորն ամենից յետ մնացող տեղամասն է բանակում, պահանջում է.—*

*Ա) Ամրացնել ռացիոնալացման աջակցության խմբակները, դարձնել նրանց մասսաների ստեղծագործական նախաձեռնության իսկական կազմակերպիչները և հրամատարության իսկական օգնականները, մարտական ուսուցման քանակական ու վորակական բարձր ցուցանիշների համար մղվող պայքարում։*

*Վերակառուցել խմբակների աշխատանքը համաձայն նոր պահանջների (սեկտորների կազմակերպում, աշխատանքն ակտիվի հետ, ռացիոնալիզատորների և գյուտարարների յերեկոների անցկացում)։*

*Ակումբներում ու լենանկյուններում ունենալ*

ռացիոնալացման տախտակներ, որոնք լուսաբանեն ռացիոնալացման ու գյուտարարության աշխատանքի ընթացքը։

Բ) Կազմակերպել գյուտարարներին խմբակների մեջ և ստեղծել նրանց համար բեղմնավոր աշխատանքի պարագա (արհեստանոցներում աշխատելու հնարավորություն, գործիքներով ապահովում, կոնսուլտացիա, և գյուտերի առաջ քաշում մինչև ղեկավար ինստանցիաները)։ Ապահովել ռազմական գյուտարարների մասնակցությունը բանվորական գյուտարարության ու ռացիոնալացման մարմիններում և վերջիններիս փորձի փոխանցումը զորամասերի աշխատանքներում։

Խնդրել ԿԿԲ ՀՌԽ սահմանել բանակային դրամական ֆոնդ գյուտարարներին նյութական օգնություն ցույց տալու համար։

Գ) Ուժեղացնել ռացիոնալացման շարժման ու գյուտարարության ղեկավարությունը հրամատարության կողմից, որն ամենից առաջ պետք է արտահայտվի հետևյալում.—

ա) ուղղել ռացիոնալացման շարժումը դեպի մարտական պատրաստության հանգույցային կամ յետ մնացող տեղամասերը, տալով նախնական կոնտրոլ պատվերների. բ) անմիջական օգնություն ցույց տալ ռացիոնալացման խմբակների ու գյուտարարների ամբողջ աշխատանքներին. գ) արագ ստուգել արած առաջարկների արժեքը և նույնպիսի արագությամբ իրացնել ընդունված առաջարկները։

Դ) Հավաքը գտնում է, որ մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը հարկա-



վոր է առաջին հերթին ուղղել դեպի գյուտարարությունն ու ռացիոնալացումը հետևյալ ասպարեզում՝ 1) հրամատարի ու կարմիր բանակայինի աշխատավոր օրվա ու ժամի նկատմամբ (ուսուցում, հասարակական բեռնավորում, տնտեսական սպասարկում, հանդիստ). 2) հրաձգային պատրաստության նկատմամբ և 3) զենքի ու տեխնիկայի խնամման նկատմամբ։

Որպես հատուկ խնդիր պետկազմի համար դնել ջոկատային այն պարապմունքների ռացիոնալացումը, որ հագեցված են տեխնիկայով (մակետներ) լեռնային պայմաններում։ Լավագույն առաջարկների համար (այդ հարցերի նկատմամբ) սահմանել բանակային մրցանակներ։

Ե) «Մարտական ուսուցման փոխառությունը», որ մասսայական տարածում է ստացել և արդեն իսկ տվել է զգալի արդյունքը, կոչված է տեխնիկական միջոցների ուսումնասիրության տեմպերն արագացնելու և առանձին մարտիկների կողմից ուսումնական օրվա պարտքն արագ վերացնելու։ Բաժանորդը «փոխառությունը վճարում է» առաջին հերթին ի հաշիվ ռացիոնալացման ուսումնական օրվա խտացման և մասամբ ոչուսումնական ժամանակի հաշվից (1–2 ժամ դեկադում), ինչպես նաև էքսկուրսիաների հաշվից։ Անհրաժեշտ է կտրականապես վերջ տալ տեղ-տեղ նկատվող այն դեպքերին, երբ «փոխառությունը» ծածկում են ի հաշիվ հանգստյան օրերի և յերեկոյան բեռնավորման։

Զ) Ռացիոնալացման բանակային բյուրոն պետք է հատուկ ուշադրություն նվիրի ԿԿԲ ռացիոնալացման նվաճումների ու գյուտարարու-

թյան փորձի փոխանակմանը և ժամանակին պատվերներ տա ռացիոնալիզատորին և գյուտարարին։

Ե) Հավաքն անհրաժեշտ է համարում պարբերաբար հրավիրել ռացիոնալիզատորների և գյուտարարների կոնֆերանսներ գնդի, դիվիզիայի ու բանակի մասշտաբով և մոտ ժամանակներում կազմակերպել ռացիոնալացման ու գյուտարարության ցուցահանդեսներ։

13. Հավաքն անհրաժեշտ է համարում վերակառուցել ռացիոնալացման աջակցող գնդային խմբակների աշխատանքը սեկտորների սկզբունքով, յուրաքանչյուրում ունենալով մշակման համար հարցերի սահմանափակ շրջան։ Հավաքը հանձնարարում է գնդային խմբակներում ունենալ մոտավորապես հետեվյալ սեկտորները.—

1) Արած գյուտերի և առաջարկների հաշվառման և նրանց իրացման ու մասսայականացման վերահսկողության սեկտոր.

2) Հրամատարի ու կարմիր բանակայինի հասարակական և ծառայության բեռնավորման ռացիոնալացման սեկտոր.

3) Մարտական պատրաստության ու քաղուսաշխատանքի ռացիոնալացման սեկտոր.

4) Տեխնիկայի ու սպառազինման ռացիոնալացման ու գյուտարարության սեկտոր.

5) Տնտեսության ու կենցաղի ռացիոնալացման սեկտոր.

6) Շտաբների աշխատանքների ռացիոնալացման սեկտոր։

Սեկտորները պետք է ստեղծեն և համախմբեն իրենց շուրջը վաշտերում, մարտկոցներում, եսկադրոններում ռացիոնալացման ակտիվ, վորի հետ մշակում են ընդունվող առաջարկները։



Ռացիոնալացման աջակցող խմբակները պետք է ունենան յուրաքանչյուր վաշտում (մարտկոցում եսկադրոնում) ստորաբաժանման ընդհանուր ժողովում ընտրված լիազոր, վորը պետք է հավաքի կարմիր բանակային առաջարկները, վարի նրանց հաշվառումը և հսկի նրանց կիրառման վրա։

Լիազորները պետք է հանդիսանան ռացիոնալացման աջակցող խմբակների բանվորական ապարատը, կոնկրետ մշակեն, ելնելով խմբակի պլանից, ստորաբաժանումներում ռացիոնալացման ու գյուտարարության աշխատանքի միջոցառումները։

14. Ռացիոնալացման ու գյուտարարության զարգացման գործում մեծ աշխատանք է ընկնում մամուլի վրա։ Բանակային մամուլի բոլոր ողակները պետք է ավելի մեծ մասնակցություն ցույց տան այդ շարժման շուրջը հասարակական ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելու գործում, մասսայականացնեն այդ գործը, բուքսիրեն և ստանձնեն շեֆությունը գյուտարարների խմբակների կամ անհատների նկատմամբ զորամասում, անցկացնեն մրցականչեր, ստուգատեսներ, մրցակցություններ ու կոնկուրսներ։

Հավաքն անհրաժեշտ է համարում շրջադարձ ստեղծել մասսայական աշխատանքներում, քաղաշխատանքում, ակումբների ու լենանկյունների աշխատանքում դեպի ռացիոնալացման ու գյուտարարության հարցերը։ Պետք է հիշել, վոր միայն ռացիոնալաց. ու գյուտարարության միջոցով մենք կհասնենք մարտակ. պատրաստության տեմպերի արագացմանը, ժամանակի ու նյութական միջոցների խնայողությանը, տեխնիկայի ու զենքի խնամմանն ու պահպանմանը, մարտական պատրաստության պլանների գերակատարմանը։

Հարվածայինն առաջին ռացիոնալիզատորն է և հեղաշրջողն է մարտական ուսուցման մեջ, հասարակական կյանքում ու կենցաղում։

# IX. ՏԵԽՆԻԿԱՅԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

15· Յերկրի հաջող ինդուստրացման և տեխնիկայի համապատասխան աճման հիման վրա ավելանում և ամրանում է ԲԳԿԲ տեխնիկական հագեցումը։

Ժամանակակից շրջանը հանդիսանում է բանակի տեխնիկական վերակառուցման շրջան։

«Յեթե նկատի ունենանք, վոր գալիք պատերազմը մեքենայացված է լինելու ծայր աստիճան, վոր այդ պատերազմում մեքենային է պատկանելու ամենագլխավոր և վճռական դերերից մեկը, ապա միանգամայն ակնհայտ կլինի, վոր կռվի յելքը հսկայական չափով կախված կլինի այդ մեքենան ամենից արդյունավետ կերպով ոգտագործելու հմտությունից» (Վորոշիլով)։

Այստեղից էլ բխում է մարտական պատրաստության մեր կենտրոնական լոզունգը՝ «Դարձնել ուղեղը դեպի տեխնիկան»։

Կռվի տեխնիկական միջոցների յուրացումը խոշորագույն խնդիր է, վոր ծառացած է զորամասերի ամբողջ կոլեկտիվի և առաջին հերթին հարվածայինների առաջ։

Ղեկավար պլանների ու ծրագրերի վորոշած պահանջների սահմաններում յուրաքանչյուր հարվածային ամենակարճ ժամանակամիջոցում պետք է հասնի հետևյալին.

ա) Գիտենալ իր տեխնիկական սպառազինման



(հանդերձանքի) ու զենքի նյութական մասն ու հատկությունները·

բ) Կարողանալ ճիշտ գործադրել զենքն ու կռվի այն տեխնիկական միջոցները, վորով զինված է մարտիկը ժամանակակից մարտի բարդ պարագայում·

գ) Պարզ պատկերացում ունենալ զորքերի մասնագիտական տեսակների (քիմիական, զրահապատ մասերի, ավիացիայի) տեխնիկական միջոցների մասին, նրանց մարտավարական ոգտագործման յեղանակների ու ձևերի մասին·

դ) Պատշաճ սովորքներ ձեռք բերել միատեղ մարտական աշխատանքի և տեխնիկական միջոցների ձևերին տիրապետելու համար (ավելի խորն ուսումնասիրելով թեորիայի հարցը, միացյալ դաշտային պարապմունքներ ունենալով զենքերի ու զորքի զանազան տեսակների հետ, ինչպես նաև պատշաճ կերպով ոգտագործելու մակետները և տեխնիկայի այլ սուրոգատները)·

յե) Որինակելի լավագույն խնամք ու վերաբերմունք ցույց տալ դեպի տեխնիկայի միջոցները (սպառազինում, հանդերձանք)·

զ) Այդ խնդիրների ավելի հաջող կատարման նպատակով հավաքը հայտնում է հետևյալ ցանկությունները·

Նորմաների սահմաններում ապահովել զորամասերը զենքի ու տեխնիկայի մաքրելու, պահելու միջոցներով, միաժամանակ առաջադրելով տրվող նյութերը ծախսելու ռացիոնալացման խնդիրը։

Ուժեղացնել ռազմական տեխնիկայի հարցերի վերաբերյալ անհրաժեշտ ձեռնարկների ու գրականության մատակարարումը։

Անհրաժեշտ է ավելի լրիվ և ավելի լավ կեր-

պով դնել մասսայական աշխատանքի ձևերը տեխնիկայի յուրացման համար. ծավալել խմբակներ և կարճատև սեմինարներ տեխնիկայի ուսումնասիրության համար, տեխնիկայի առանձին տեսակների համար անցկացնել յերեկույթներ, կազմակերպել «տեխնիկայի տոնակատարության» օրեր, դասախոսություններ ու զրույցներ, տեխնիկայի պրոպագանդիստների սեմինարներ:

Ավելի լայն չափով գործադրել էքսկուրսիաները դեպի մասնագիտական զորամասերը, ապահովելով այդ էքսկուրսիաներում տարվող պարապմունքների ու ցուցադրության վորակը: Էքսկուրսիաների պլանների մեջ մտցնել ֆաբրիկ-գործարանային և մանավանդ ծանր ինդուստրիայի այցելությունը:

Հարվածայինը պետք է օրինակ ծառայի մյուս մարտիկների համար, ներգրավելով իր ստորաբաժանման ամբողջ կոլեկտիվը ռազմական տեխնիկայի յուրացման և այդ ասպարիզում սահմանված նորմաների բարձրացման համար:

Ռազմական տեխնիկայի գրոհի միամսյակը հանդիսանում է տեխնիկայի համար մղած պայքարի սկիզբը միայն, հանդիսանում է կռվի տեխնիկական միջոցներին իրոք տիրապետելու ճանապարհի առաջին քայլերը միայն:

Յուրաքանչյուր ստորաբաժանման մեջ, յուրաքանչյուր զորամասում պետք է ամփոփվեն միամսյակի արդյունքները, բոլոր մարտիկներին հասցնելով այդ արդյունքները: Բանակի մասշտաբով ամփոփված փորձը պետք է օգտագործվի՝ սահմանելու համար աշխատանքի լավագույն ձևերն ու մեթոդները, վորպեսզի այդ դառնա ԿԿԲ բոլոր զորամասերի սեփականությունը:



## X. ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ

16. Հարվածային շարժման մասսայական թափը պահանջում է ուժեղացնել հարվածայինների հետ տարվող քաղաքական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքը: Հարկավոր է անընդհատ ընդարձակել նրանց աշխարհահայացքը և բարձրացնել նրանց ակտիվությունը:

Այդ նպատակով.

ա) Ավելի հաճախ գումարել դասակի, վաշտի, գնդի հարվածայինների հավաքներ առանձին հրատապ հարցերի առթիվ.

բ) Ավելի լավ հիմքերի վրա դնել յուրաքանչյուր հարվածայինի առօրյա աշխատանքի հաշվառումը: Մասսայականացնել աշխատանքի լավագույն օրինակները: Պարբերաբար դնել հարվածայինների հաշվետվություններ ինքնաստուգման յերեկոներում, դասակի, վաշտի ժողովներում և այդպիսով բարձրացնել հարվածայինի առօրյա պատասխանատվությունն իր ստանձնած պարտավորությունների համար.

գ) Գործնապես լուծել լավագույն հարվածայինների պաշտոնեական և հասարակական խրախուսանքի հարցը. օգտագործել ԲԳԿԲ կարգապահական կանոնադրքով նախատեսված խրախուսանքները, անցողիկ մրցանակները, առաջին հերթին թատրոնների տոմս տալը, լավագույն տեղերն ակումբում, մրցանակ տալն արժեքավոր առաջարկների համար և այլն:

Խնդրել ԿԿԲ ՀՌԽ սահմանել բանակային մի անցողիկ մրցանակ, վորն ամեն տարի հատկացնել

ժանյովրաներից հետո բանակի լավագույն հարվածային զորամասին․

դ) Ավելի ակտիվ ներգրավել հարվածայիններին, բանվորներից, բատրակներից, կոլխոզնիկներից, կուսակցության և կոմսոմոլի շարքերը։

Յուրաքանչյուր նոր զորակոչ պետք է ավելի ու ավելի մեծ քանակով Կարմիր բանակի շարքերը բերի հարվածայիններ արտադրությունից ու կոլխոզներից։

Մեր խնդիրը պետք է լինի՝ կարողանալ առաջին իսկ օրերից ընդգրկել այդ նոր ընկերներին մեր կազմակերպչական ազդեցությամբ և նրանց մոբիլիզացիայի ենթարկել ուսումնական խնդիրների մարտական տեմպերով կատարելու համար։

## XI. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

17․ Հավաքը ողջունում է ԿԿԲ սոցիալիստական մրցակցությունը Բագվի պրոլետարիատի ու նրան միացած Վրաստանի ու Հայաստանի բանվորների հետ, որպես մի նոր նախաձեռնություն սոցիալիստական շինարարության հարվածային տեմպերի համար, ԽՍՀՄ պաշտպանության համար, մղած պայքարում, որպես Կարմիր բանակի վրա ունեցած պրոլետարական ազդեցության մի նոր ձև։ Հավաքը կտրուկ ձևով դնում է այն հարցը, որ անհրաժեշտ է մրցակցության պրոցեսում իրագործել առօրյա կոնտրոլը ստանձնած պարտականությունների կատարման վրա և ժամանակին առաջ քաշելու յետ մնացողներին։

Մրցակցության ընթացքն ստուգելու և այդ բնագավառում փորձի փոխանակման նպատակով,



նպատակահարմար է դեկտեմբերին մի անգամ հրատարակել մի էջ «Վիշկա» և «Կրասնի Վոյին» թերթերում։

Ընթացիկ տարվա վերջում նպատակահարմար է հրավիրել հարվածայինների 3-րդ հավաքը, Բագվի պրոլետարիատի և Վրաստանի ու Հայաստանի պրոլետարիատի ներկայացուցիչների հետ միասին պայմանագրի արդյունքների ամփոփման համար։

## XII. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

18․ Ակումբներն ու լենանկյունները պետք է լայն չափով մասսայականացնեն սոցմրցակցությունն ու հարվածայնությունն ամեն աշխույժ և ցուցադրական ձևերով, այն է՝ օգտագործելով Կարմիր բանակային եստրադը, լավագույն հարվածայինների ու կեղծ հարվածայինների լուսանկարումը, ռադիո հաղորդումը, հարվածային ստորաբաժանումների մրցականչը և այլն, հասնելով նրան, որ հարվածայնության մեջ ներգրավվեն նորանոր կադրեր։

Ամբողջ մասսայական աշխատանքը ներկայումս պետք է հենվի հարվածայինների վրա, նրանց միջից վերցնելով մասսավիկների մարտական ակտիվը։

Անհրաժեշտ է լայն չափով ծավալել սոցմրցակցությունը ակումբների, լենանկյունների, գրադարանների միջև, կառուցելով այդ հիման վրա սոցմրցակցության ամբողջ ընթացքի սպասարկումը զորամասում։

Կատարել աշխատանքի փորձի փոխանակում ակումբների ու լենանկյունների միջև և մրցակ-

ցության պայմանագրերի կատարման ստուգում փոխադարձ հետազոտումների, ցուցահանդեսների միջոցով և այլն:

Կարմիր Բանակի Տան կողմից անհրաժեշտ է ավելի ակտիվ և կենդանի օգնություն ակումբներին, փորձի մասսայականացման ու փոխանակման ասպարեզում. Կար. Բանակի Տները պետք է սիստեմատիկորեն լուսաբանեն զորամասերի փորձը, թե իրենց մասսայական աշխատանքի և թե կաբինետների միջոցով:

19. Նշելով մամուլի մեծ դերը սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության զարգացման և բարելավման մեջ, հավաքն առանձին համառությամբ շեշտում է, որ անհրաժեշտ է ցույց տալ զորամասերի դրական փորձը, աշխատանքի լավագույն օրինակները թե՛ «Կրասնի Վոյինի», թե ազգային դիվիզիաների թերթերի և թե ստորին մամուլի էջերում (բազմատիրաժներ, լուսաթերթեր, ռադիո-թերթեր):

Անհրաժեշտ է իրացնել «Յուրաքանչյուր զինթղթակից հարվածային և յուրաքանչյուր հարվածային զինթղթակից» լոզունգը:

***

Հարվածային բանակայինների հավաքը կոչ է անում Կովկասյան Կարմրադրոշ Բանակի բոլոր մարտիկներին, հրամանատարներին ու քաղաշխատողներին.—

> «Մարտական պատրաստության մեր ամբողջ աշխատանքը վարել՝ լիովին գիտակցելով, որ անհրաժեշտ է շարունակել, ամեն րոպե, պատրաստ լինել պաշտպանելու մեր պրոլետարական պետությունը»:
>
> (Վորոշիլով)



## ԿԿԲ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ 2-ՐԴ ՀԱՎԱՔԻ ԴԻՄՈՒՄԸ ԲԱԳՎԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Բագվի նավթահանքերի հերոսական պրոլետարիատին, Անդրկովկասյան Ֆեդերացիայի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատին, լենինյան կուսակցության հուժկու հենարանին՝ սոցիալիզմի համար նրա մղած պայքարում—հեղափոխական յեղբայրական վողջույն Կովկասյան Կարմրադրոշ Բանակի հարվածայինների 2-րդ հավաքից:

Լենինյան կուսակցության ղեկավարությամբ ընթացող ԽՍՀՄ ներկայումս գտնվում է սոցիալիզմի շինարարության աշխատանքների վիթխարի պլանի ավարտման շեմքին, պլան, որի անունն է հնգամյակը չորս տարում: 1931 թիվը հանդիսանում է հնգամյակի վճռական տարին, յերբ մենք պետք է ավարտենք ԽՍՀՄ սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը:

«Վճռական հաղթանակի հեռանկարը չի կարող չառաջացնել բանվորների ու գյուղացիների մեջ խանդավառության ու աշխատավորական նոր վերելքի բռնկում: Բայց նա չի կարող չուժեղացնել մեր դասակարգային թշնամիների ատելությունն ու նենգությունը (Կենտկոմի ու ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենում):

Հատկապես հենց այդ պատճառով մեզանից պահանջվում է ուժերի առավելագույն լարում սոցիալիստական շինարարության հետագա ծավալման և ԽՍՀՄ, համաշխարհային պրոլետարիա-

կան հեղափոխության հարվածային բրիգադի պաշտպանունակության ամրացման համար:

Հատկապես հենց այդ պատճառով մենք հրավիրեցինք ձեզ,— նավթային մեքենաների պրոլետարներիդ, սոցիալիստական մրցակցության:

## ՏԱԳՆԱՊԱԼԻ ԼՈՒՐԵՐ

Լինելով մեր յերկրի բանվոր դասակարգի, կոլխոզնիկների, չքավորների ու միջակների բաղադրիչ, անխզելի մասը, հանդիսանալով սոցիալիստական շինարարության զինված հենարանն ու պաշտպանը, մենք, Կարմիր բանակի հարվածայինները, ուշադրությամբ հետևում ենք հնգամյակի ճակատում ձեր մղած հերոսական պայքարին, վճռական տարվա արդֆինպլանի ձեր կատարմանը, Լենինյան Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի նավթարդյունաբերության մասին կայացրած վորոշման իրագործմանը:

Յեվ ահա վերջին որերս մենք տագնապալից լուրեր ենք ստանում նավթի համար մղած պայքարի առանձին տեղամասերից:

Այսպես որինակ՝ Անդրկովկասյան ավազաններում ընկած կրակոտ հեղափոխական Ալեքսեյ Ջափարիձեի անունը կրող գործարանը չի կատարել վո՛չ հատուկ կվարտալի պլանները և վոչ հունվար ամսվա պլանը բենզինի ու սպիտակ նավթի վերաբերյալ: Գործարանը պարտք է մնացել յերկրին 408 տոնն բենզին և 1.109 տոնն սպիտակ նավթ:

## ԹՎԵՐ ՈՒ ՓԱՍՏԵՐ

Տագնապալի լուրեր են հասնում Սուրախանից, վորտեղ բոլշևիկյան հաղթանակներ տա-



նելով հատուկ կվարտալում, սկսեցին իջեցնել տեմպերը վճռական տարվա առաջին ամսում:

Մենք տեսնում ենք, վոր Սուրախանի առաջին նավթահանքը կանգ է առել տեղում, վոր յերկրորդ նավթահանքը իջեցրել է արտադրանքը մինչև 95 տոկոսի, և վոր յերրորդ նավթահանքը իջեցրել է արտադրանքը մինչև 75 տոկոս խայտառակ թվի:

Վերջապես՝ մենք, Կարմիր բանակի հարվածայինները, ծանոթացանք այն հաղորդագրության հետ, վոր ամբողջ Ազնեֆթում հունվար ամիսը կատարված է միայն 96 տոկոսով, իսկ փետրվարի առաջին հնգօրյակում՝ միայն 90,1 տոկոսով:

Նշելով ծրագրի թերակատարման այդ տագնապալի փաստերը, մենք անհրաժեշտ ենք համարում հաղորդել ձեզ մեր մարտական ուսուցման պլանների կատարման մասին: Ահա ձեզ, ընկեր նավթայիններ, մի շարք որինակներ·

## ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ՊԼԱՆՆԵՐԸ

Կովկասյան դիվիզիայի 1-ին կապի վաշտը մրցակցության ու հարվածայնության հետևանքով մի շարք հիմնական դիսցիպլիններից ուսպլանի կատարում ու գերակատարում: Մորզիստները Մորզեի ապարատի վրա տալիս են մի րոպեյում 41 նշան, փոխանակ պլանով նախատեսված 30 նշանի և հանդիսական պլանի՝ 40 նշանի: Ավիոսիգնալիստները մի րոպեյում բացում են 13 ծածկագիր նշան, փոխանակ հանդիսական պլանի 12 նշանի: Հեռախոսային գիծն անց է կացվում

մի ժամում 5 կիլոմետր, մինչդեռ հանդիպականով պահանջվում էր 4 կիլոմետր:

3-րդ հարվածային հրետանական գնդի միավորների մարտկոցը պլանը կատարում է գերանցումով: Ու 25-ն հունվարի տվյալներն են. քարտեզի կողմնորոշումը կողմնացույցով անց է կացվում համեմատած պլանի հետ 5 վայրկյանով արագ, հեռախոսիչների ու հեռախոսույցների փոխադարձ փոխարինելիությունը գերակատարված է 30 տոկոսով, նշանի ազիմուտի վորոշումը կատարվում է 5 վայրկյան գերակատարումով:

## ՅԵՐԴՎՈՒՄ ԵՆՔ

Ամբողջ Կովկասյան Կարմրադրոշ բանակը ներկայումս անց է կացնում ընկ. Վորոշիլովի անվան տեխնիկայի գրոհի միամսյակ: Անց է կացվում մարտական ձիու ստուգատես: Ուժեղ կերպով ուսումնասիրվում է հրաձգությունների նոր կուրսը, վոր տալիս է գերազանց հրաձիգ:

Մենք, հարվածայինների բանակային 2-րդ հավաքի պատգամավորներս, տալիս ենք հեղափոխական յերդում, լինել մեր զորամասերում կազմակերպիչներ ու առաջավոր մարտիկներ՝ Կարմրադրոշավոր բանակի հանձն առած պարտավորությունների համար մղած պայքարում, և մեր կողմից դիմում ենք ձեզ, կոչ անելով. կատարել լիովին, առանց պոչերի ու պարտքերի սոցիալիստական մրցակցության մեր պայմանագիրը:

— Յեռապատկեք ձեր ջանքերը, լարեցեք ձեր յերկաթե մկանները, մոբիլիզացիայի յենթարկեք դասակարգի ուժն ու կամքը,



բայց վճռական ամսին ինչ, եվ վոր լինի, լրացրեք հունվարի պարտքը, կատարեք ու գերակատարեք վճռական տարվա պլանները:

— Պրոլետարական ամբողջ խստությամբ խփեք գործալքությանը, բանթողը, ժամթփվածությանը, անպատասխանատվությանն ու ոպորտունիզմին, վոր խանգարում են նավթահանման պլանների կատարմանը:

## ԼՍԻՐ, ՊՐՈԼԵՏԱՐ

Լսիր, հողի խորքերը գրոհող Բաքվի պրոլետար: Սոցիալիստական շինարարության հազարավոր հումկու դիզելներ նավթ են պահանջում:

Սոցիալիստական հողագործության անծայրածիր դաշտերը հերկող տասնյակ հազարավոր տրակտորներ պահանջում են բենզին ու կերոսին:

Կարմիր բանակը կուսակցության լենինյան ճիշտ գծի հետեվանքով ամեն ամիս ավելի ու ավելի յե հագենում նորագույն տեխնիկայով: Կարմրաստղ հզոր տանկերը, զրահամեքենաները ու սավառնակները պահանջում են բարձրորակ վառելանյութ ու քսելու յուղ, վոր մշակվում են նավթից:

Դու վառելանյութ ու յուղ պետք է տաս դիզելներին, տրակտորներին, տանկերին ու սավառնակներին:

Ահա մեր, Կարմրադրոշավոր բանակի հարվածայիններիս կոչը քեզ, Բաքվի պրոլետար:

# ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԱՐՎԱՆ—ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄՊԵՐ

Մրցակցության մեջ մտնելով մարտական ուսուցման հարվածային տարում, սիստեմատիկորեն իրականացնելով կատարման ստուգումը, միմյանց փոխադարձ կոնտրոլն ու օգնությունը, հարվածայնորեն կռվենք մեր պայմանագրի լրիվ կատարման համար:

Հարվածային տարվան տանք նավթահանման ու Կարմրադրոշավոր բանակի մարտական պատրաստության համար մեր աշխատանքի հարվածային տեմպեր:

Կեցցե՛ կուսակցությունը, որ առաջնորդում է մեզ դեպի սոցիալիզմի վճռական հաղթանակները:

Կեցցե՛ Անդրկովկասի բանվոր դասակարգի առաջապահ ջոկատ Բաքվի պրոլետարիատը:

Կեցցե՛ աշխատանքի և ուսուցման կոմունիստական մեթոդները՝ սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը, որ դրոշ են դարձել մեր յերկրի սոցիալիզմի համար մղած պայքարում:



# ԶՈՐՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՄԱՏԱՐ ԸՆԿ. ՍՄՈԼԻՆԻ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ

## ԱՎԵԼԻ ՄԵԾ ՀԱՄԱՌՈՒԹՅԱՄԲ, ԱՎԵԼԻ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱՑՆԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂԸ

## ՄԱՐՏՆՉԵԼ ՀԱՆԴԻՊԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Իր յեզրափակման խոսքում ընկ. Սմոլինը հսկայական ուշադրություն նվիրեց հանդիպական պլանին, մարտական ուսուցման տեմպերի բարձրացման վրա նրա ունեցած ազդեցությանը.

— Հանդիպական պլանը մասսաների իսկական ստեղծագործության բարձրագույն արտահայտությունն է: Նա արտահայտում է մասսաների գիտակից մասնակցությունը այն բարդ խնդիրների լուծման մեջ, որ ծառացել են մեր առաջ:

Բայց հանդիպական պլանը չպետք է փաթաթվի վերից: Նա պետք է մշակվի կարմիր բանակայինների ու պետկազմի ամբողջ մասսայի ակտիվ մասնակցությամբ: Միայն այդ դեպքում մասսաները կզգան իր հանձն առած պարտավորությունները և գիտակցորեն կմարտնչեն նրանց կատարման համար:

## ԺԱՄԱՆԱԿ ԳՏՆԵԼ ՍՏԱԺԻՐՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Հանդիպական պլանը հսկայական դեր պետք է խաղա դնդային դպրոցներում ու միամյակների

վաչյանում: Նրա օգնությամբ, առանց ցածրացնելու վորակը, պետք է հասնել ծրագրի ուսուցման անցնելու ժամանակի կրճատման: Իսկ տնտեսված ժամանակը պետք է օգտագործել կուրսանտների ու միամյակների գործնական ստաժիրովկայի համար հրամանատարական պաշտոններում, քանի վոր հրամանատարի պատրաստության այդ կարեվորագույն մասի վրա մենք քիչ ուշադրություն ենք նվիրում:

Այդ միջոցառումը մեզ հնարավորություն կտա ուսումնական տարվա վերջում կուրսանտից ստանալ միանգամայն պատրաստի կրտսեր հրամանատար, իսկ միամյակից՝ պահեստի փորձված հրամանատար: Այդ, վերջապես՝ այն հետեվանքը կունենա, վոր մենք կավելացնենք մեր հրամանատարական ռեսուրսները:

Հսկայական ազդեցություն կունենա այդ միջոցառումը նաև մարտիկի պատրաստության վրա: Վաշտը գալով, ստաժորը կհեշտացնի կրտսեր հրամանատարի աշխատանքը կարմիր բանակայինի դաստիարակության նկատմամբ:

## ՇԵՇՏԸ ԴՆԵԼ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՎՐԱ

Աշխատելով հանդիպական պլանի վրա, պետք է հիշել, վոր նա միայն այն ժամանակ կտա ցանկալի արդյունքները, յերբ կամրացվի մասսայական ռացիոնալացման շարժումով:

Հանդիպական պլանը կպահանջի մարտիկներից ու պետկազմից ուժերի լրացուցիչ մոբիլիզացիա, լրացուցիչ ժամանակ: Իսկ այդ ժամանակը պետք է գտնել մեր աշխատանքի ռացիոնալացման օգնությամբ:



Մեր բանակի մի քանի մասերում փորձեր կան լրացուցիչ ժամանակը խլելու մասսայական աշխատանքից կամ մարտիկի ու հրամանատարի հանգստից: Դրությունից նման «յելքը» ճիշտ չէ և մինչեվ իսկ վնասակար է: Չի կարելի ուսուցման բարձր ցուցանիշների հասնել ի հաշիվ մարտիկի ու հրամանատարի ֆիզիկական ուժերի ջլատման:

Նույնպես սխալ է մի քանի զորամասերի այն փորձը, վորով աշխատում են օգտագործել տնտեսված ժամանակը մարտիկի ու հրամանատարի հանգստի համար: Ռացիոնալացումից ստացած ժամանակը պետք է օգտագործվի մարտական պատրաստության համար:

Մարտիկի ու հրամանատարի ստեղծագործական ակտիվությունը հարկավոր է ուղղել դեպի յուրաքանչյուր ուսումնական ժամվա, յուրաքանչյուր ուսումնական օրվա, մարտիկի ուսուցման մեթոդների ռացիոնալացումը: Հաջողություն ձեռք բերելով այդ տեղամասերում, միանգամայն հնարավոր է գտնել լրացուցիչ ժամանակ հանդիպական պլանի ապահովման համար:

Ինչպես չի կարելի ուսուցման մեջ բարձր ցուցանիշների հասնել ի հաշիվ մարտիկի ֆիզիկական ուժերի ջլատման, այնպես էլ չի կարելի դրան հասնել ի հաշիվ զենքի ու տեխնիկական միջոցների նյութական մասի ջլատման:

Ինչ օգուտ այն հարվածայինից, վորն ընկնելով բարձր ցուցանիշների յետևից, կփչացնի նյութական մասը: Օգուտը շատ քիչ է, իսկ վնասը՝ հսկայական: Հարվածայինը պարտավոր է պահպանել նյութական մասն իր աչքի լույսի պես:

# ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆԻ ՀԱՄԱՐ

Ներկայումս մենք գտնվում ենք սոցիալիստական մրցակցության այնպիսի շրջանում, յերբ հարկավոր է պահանջել, վորպեսզի մարտիկն ու հրամանատարը հարվածայիններ լինեն բոլոր դիսցիպլիններից:

Յեթե, որինակ, մարտիկը կամ ստորաբաժանումն իր ամբողջ ուժերը հարվածայնության մեջ նվիրի հրաձգային պատրաստությանը, թուլացնելով ուշադրությունը դեպի մարտավարական պատրաստությունը, ձեռքբերածները թույլ տա այլ տեղամասում, գրոհ և նրա ուժերը, թեկուզ և լավ արդյունքների հասնի հրաձգության մեջ: Լավ հրաձիգը տակավին այն ամենը չէ, ինչ անհրաժեշտ է լավ մարտիկի համար: Դիպուկ ձիգին հարկավոր է ավելացնել դեռ շատ այլ առարկաներ ու գիտելիքներ:

Կարո՞ղ է արդյոք հարվածային ստորաբաժանման մարտիկն իրեն լրացուցիչ կերպով հարվածային հայտարարել վորևե դիսցիպլինից: Կարող է: Օրինակ՝ կարմիր բանակային Իվանովը իջեցնում է իր հարվածային ջոկի ցուցանիշները: Վորպեսզի հավասարվի ջոկի մնացած մարտիկներին, Իվանովը կարող է իրեն լրացուցիչ կերպով հայտարարել հարվածային հրաձգային պատրաստությունից, առանց թուլացնելու ուշադրությունը դեպի մնացած դիսցիպլինները:

Ընկերներ. Կովկասյան Կարմրադրոշ բանակի ՀՌԽ բարձր գնահատելով ներկա հավաքը, վստահ է, վոր այս հավաքից հետո մեր բանակն ամբո-կուռ կոփված, յեռանդի ու ստեղծագործության նոր հասանքով կգրոհի մարտական ուսուցման նոր բարձունքները:



# ԿԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԸՆԿ. ԻՊՊՈՅԻ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ

Հավաքի աշխատանքի ամբողջ ընթացքը պարզ ցույց է տալիս, վոր մենք ձեզ հետ միասին այս տարի մի մեծ քայլ ենք կատարել դեպի առաջ, դուրս ենք յեկել հարվածայնության մանկական շրջանից, մեր առաջ դրել ենք մեր աշխատանքի վերակառուցման խնդիրները և շատ բան ենք արել այդ խնդիրների բարձրացման համար:

Յես պետք է չեշտեմ, վորպես առանձնապես դրական գիծ, այս հավաքում ձեր ունեցած յելույթների բարձր մակարդակը: Այդ յելույթներում համարյա չկային «գերհարվածային» արտահայտություններ, պարահանդիսային ասույթներ, ընկերները կարողացան խոսել լայն ինքնաքննադատության հիման վրա ցույց տալ այն բացասական թերությունները, վոր տակավին կան մեր աշխատանքում, և միևնույն ժամանակ հաղորդակից դարձնել մեզ այն դրական փորձին, վոր ունի յուրաքանչյուր զորամաս:

Ամփոփելով հավաքի աշխատանքը, պետք է մեր առաջ դնենք հետևյալ խնդիրները.

## ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐ

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐՏԻԿԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՆԵԼ ՈՐՎԱ, ԴԵԿԱՏԻ, ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

Ինչո՞ւ յե մեզ համար բացառապես կարևոր այս խնդիրը, ինչո՞ւ յե մեզ հարկավոր, վոր կարմիր բանակայինը գիտենա ու հասկանա մարտական պատրաստության այն խնդիրներն ու կոնտրոլ թվերը, վոր մենք առաջադրում ենք նրան: Այդ հարկավոր է նրա համար, վորովհետև պլանը մարտիկին հասցնելն ապահովում է, ստեղծում է գիտակից վերաբերմունք մարտիկի կողմից դեպի նրան առաջադրած խնդիրների կատարումը:

Դուք, ընկերներ, գիտեք, վոր մարտում, և ընդհանրապես ուր էլ վոր լինի, հաջողության հիմնական նախադրյալը, հիմնական նախապայմանը հանդիսանում են ձեզ առաջադրված խնդիրների գիտակից ըմբռնումը: Յեթե կարմիր բանակայինը գիտենա ու հասկանա, թե ինչ ենք մենք ուզում սովորեցնել տվյալ ամսում, դեկադում, դաշտային պարապմունքում և այլն, յեթե նա հասկանա այն խնդիրները, վոր մենք առաջադրում ենք նրան, այդ արդեն կլինի հաջողության կեսը այդ խնդիրների լուծման գործում:

Ահա թե ինչո՞ւ անհրաժեշտ է մեր աշխատանքի ուշադրության կենտրոնում դնել մարտական պատրաստության պլանը մարտիկին հասցնելը:

Սեկցիաների աշխատանքի հետևանքով ստացված մեր բանաձևերին մենք կցեցինք մի շարք ձևեր, վորոնց ոգնությամբ հարկավոր է պլանը հասցնել մարտիկին: Բայց յես, ընկերներ, խիստ հանձնարարում եմ ձեզ հիշել, վոր այս կամ այն ձևի նպատակահարմարության հարցը, այդ այնպիսի հարց է, վորի շուրջը կարելի յե շատ վիճել: Մենք հավաքում չկարողացանք սահմանել աշխատանքի վորևէ միանգամայն վորոշ կայուն ձև: Ձևերը կարող են լինել չափազանց բազմազան:

Յեվ վորքան ավելի լայնորեն աշխատի ձեր ստեղծագործական միտքը նոր ձևեր մշակելու համար, այնքան ավելի լավ: Բայց մի հափշտակվեք միայն ձևերով, մի դարձրեք այդ գործը այնպիսի դրության, յերբ բազմազան ձևերում պլանների ու ցուցանակների ժողովածուի մեջ կորչում են հիմնական խնդիրները:

Ձեր աշխատանքի հիմնական խնդիրն է մարտական պատրաստության պլանի կատարումը:

Յեթե դուք ունեք լավ ցուցանիշներ, մարտական ուսուցման բոլոր բնագավառներում, այդ նշանակում է, վոր ձեր աշխատանքը հաջող է: Իսկ յեթե դուք գործադրեք տասնյակ ու հարյուրավոր լավագույն ձևեր, իսկ աշխատանքի արդյունքները թույլ լինեն, այդ նշանակում է, վոր ձեր աշխատանքն անբավարար է: Յես գտնում եմ, վոր ամենահիմնականն է չափանիշը: Ներկայումս հարվածային շարժման արդյունքների մասին պետք է դատել վոչ թե ժողովների, խորհրդակցությունների, պլակատների, ցուցանակների և այլի քանակով, այլ առաջին հերթին մարտական պատրաստության արդյունքներով:

## ՅԵՐԿՐՈՐԴ ԽՆԴԻՐ

## ՆԵՐԳՐԱՎԵԼ ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆԸ ԱՄԲՈՂՋ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՍՍԱՅԻՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻՆ

Յերկրորդ ողակը, վորից պետք է կառչել՝ այդ հանդիպական պլանն է:

Ընկերներից մեկը միանգամայն ճիշտ մատնանշեց, վոր հանդիպական պլանի հարցը ներկայումս մեր աշխատանքում հանգուցային հարց է:

Ինչո՞ւ յե կարեվոր հանդիպական պլանը, վո՞րն է այստեղ հիմնականը:

Նախ՝ այն պատճառով, վոր հանդիպական պլանը մոբիլիզացիայի յե յենթարկում, ուղղություն է տալիս մարտական պատրաստության գործի համար առավելագույն ջանքերը, կարմիր բանակային մասսայից պահանջում է առավելագույն լարվածություն:

Յերկրորդ՝ այն պատճառով, վոր հանդիպական պլանը, հենց հանդիպական պլանի մշակումը ապահովում է նրա մշակմանը մասնակցող մարտիկներին ավելի լավ, ավելի կոնկրետ հասկանալ և ավելի կոնկրետ մտածել նրանց առաջադրված մարտական պատրաստության խնդիրների գնահատականին: Յեթե դուք կարողացաք, ինչպես հարկն է, կազմակերպել հանդիպական պլանի մշակումը վարից, ապա ուրեմն դուք ձեռք կբերեք այն արդյունքը, վոր մարտիկները լավագույն ձևով կյուրացնեն մարտական պատրաստության խնդիրները:



Յերրորդ՝ հանդիպական պլանը կարեվոր է մեզ համար այն պատճառով, վոր նա ավելացնում է մարտիկների պատասխանատվությունն այն խնդիրների համար, վոր ծառացած են նրանց առաջ հանդիպական պլանի կարգով: Այլ բան է, յերբ մենք պլանը տալիս ենք վերից: Այստեղ պատասխանատու հրամանատարությունն է: Թեև մարտիկը նույնպես պատասխանատու յե, բայց յերբ նա ինքն է առաջադրում այդ խնդիրները, այն ժամանակ նրա պատասխանատվությունն ավելանում է: Յեվ պատասխանատվությունը ձեվական չե, բառ ուրենքի, այդ պատասխանատվությունն եյական է:

Ավելի լավ է ապահովել հանդիպական պլանի ավելի ուշադիր, ավելի դանդաղ մշակում, բայց հասնել նրան, վոր նրա մշակմանը ներգրավված լինեն մարտիկների հոծ մասսան, և այն ժամանակ յուրաքանչյուր մարտիկ կիմանա իր խնդիրները մարտական պատրաստությունից, քանի վոր ինքն է մասնակցել, ինքն է գնահատել այդ պլանը:

## ՅԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ

## ՆԵՐԳՐԱՎԵԼ ԱՄԲՈՂՋ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՍՍԱՅԻՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռացիոնալացման գործը մեր Կովկասյան Կարմրադրոշ բանակում այնքան ել լավ չէ: Մենք յետ ենք մնացել:

Յես կարծում եմ, վոր մենք մեր հավաքում շոշափեցինք մինչեվ վերջ ռացիոնալական պլանների կատարման հնարավորությունները: Ռացիո-

նալացումն անհնար է առանց մասսայական շարժման: Մենք ցույց չենք տվել մարտիկներին ու հրամկազմին մարտական պատրաստության ու նրա ռացիոնալացման այն հարցերը, վորոնց վրա պետք է աշխատի ռացիոնալական միտքը: Մինչդեռ ռացիոնալացման հաջողությունը կախված է հենց դրանից:

Յուրաքանչյուր հրամատար պետք է ցույց տա իր ռացիոնալիզատորներին այն հարցերը, վորոնց վրա պետք է նրանք աշխատեն: Պետք է ընկնել այդ պատվերները վերից, շտաբից ու Քաղվարչությունից: Մենք մտադիր ենք մոտ ժամանակներում ռացիոնալացման բանակային այդպիսի պատվեր տալ ձեզ, իսկ ձեր գործը կլինի լրացնել այդ ձեր պատվերներով և առաջ շարժել այդ գործը: Առանց այդպիսի միջոցառումների մենք մեծ հաջողություններ ձեռք բերել չենք կարող:

## ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ

## ՀԱՍՆԵԼ ՆՐԱՆ, ՎՈՐՊԵՍԶԻ ՊԵՏԿԱԶՄԸ ԴԱՌՆԱ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

Հարվածայնության ու սոցմրցակցության մեջ ամենից առավել թույլ տեղամասը պետկազմի աշխատանքն է: Ընկերներից մեկն ասաց, վոր հրամատարները բավականաչափ չեն հենվում հարվածայինի վրա: Յես կարծում եմ, վոր հրամկազմի աշխատանքում այդ հիմնական թերությունն է:

Վերցնենք, որինակ՝ վաշտը: Նրա կազմում կան առաջավորներ ու յետ մնացողներ: Վաշտի



հրամատարը յետ մնացողներին առաջ քաշելու գործում պետք է հենվի առաջավորների վրա, իսկ առաջավորները հարվածայիններն են:

Յեթե հրամատարը չի հասկանում այդ, յեթե նա չկարողացավ իր աշխատանքը կառուցել հենվելով հարվածայինի ողնության վրա, ապա նա չի կարող կատարել մարտական պատրաստության այն չափազանց բարդ խնդիրները, վոր առաջադրված են նրան:

Ներկայումս հրամկազմի առաջ դրված են չափազանց մեծ ու բարդ խնդիրներ իր սեփական պատրաստության նկատմամբ: Դեկադում յերկու որ հրամկազմն ազատվում է զորանոց գալուց և պարապմունքներին հաճախելուց: Այդ որերին պարապմունքներ վարելը ամբողջովին հանձնվում է կրտսեր հրամկազմին: Հրամկազմի ուսուցման խնդիրներն այնչափ բարդ են, վոր հարկ կլինի դեռ ավելի ևս մեծ ժամանակ նվիրել հրամկազմի ինքնապատրաստությանը և ուսուցմանը:

Ինչպիսի յեզրակացություն պետք է հանել այստեղից: Միայն մեկ յեզրակացություն. կարմիր բանակայինի ուսուցման համար ավելացնել կրտսեր հրամատարների, առաջավոր հարվածայինների պատասխանատվությունը, վորոնց կարելի յե հանձնել առանձին հարցերից յետ մնացող մարտիկների պատրաստությունը:

Թույլ տվեք, ընկերներ, սրանով ավարտել իմ յեզրափակման խոսքը:

Բանակի Հեղափոխական Ռազմական Խորհրդի անունից վստահություն եմ հայտնում, վոր մեզ կհաջողվի նույնչափ կոնկրետ, նույնչափ

գործարար ձևով, նույնպիսի խանդավառությամբ, ինչպես մենք կատարեցինք հավաքի աշխատանքը, առաջ քաշել հավաքի որոշումները դեպի կարմիր բանակային մասսայի խորքը և մեր պետկազմի ամբողջ մասսայի մեջ: Յեվ այն ժամանակ յերկրորդ բանակային հավաքն առանց չափազանցության հառաջադիմության մի վիթխարի քայլ կլինի մեր բանակի մարտունակության ամրացման ճանապարհին:



## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# ՄԱՐՏԻԿԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՈՐԻԵՆՏԻՐ ՍԽԵՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ

Նպատակը.— *Յուրաքանչյուր մարտիկ պետք է.—*

1. *Հաստատապես գիտենա աստիճանի նպատակադրումներն ու կոնտրոլ թվերը:*

2. *Ակտիվ մասնակցություն ցույց տա հանդիպական պլանի մշակմանը:*

3. *Ապահովի հանդիպական պլանի կատարումը սոցիալիստական մրցակցությամբ:*

4. *Հաստատապես գիտենա հանդիպական պլանի կատարման արդյունքներն ու սոցիալիստական մրցակցության պայմանագրերով պարտավորությունները:*

Ձեվերը.—

1. *Վաշտի ժողով՝ վաշտի հրամանատարի զեկուցումով աստիճանի (կամ նրա մի մասի) նպատակադրումների մասին, նորմայի ցուցանիշների մասնանշումով:*

2. *Դասակներում հանդիպական պլանների մշակումը:*

3. *Դասակների հանդիպական պլանների ամփոփումը վաշտային հանդիպական պլանի, որա հաստատումը ժողովում և հարեվան վաշտին մրցակցության կանչելը:*

4. *Նպատակադրումների ու հանդիպական*

պլանի գեղարվեստական ձեվավորումը լենան-կյունում ։

5․ Վաշտային մամուլ ։

6․ Հարվածայինների հավաքներ ։

7․ Շեֆերի ու յենթաշեֆերի խորհրդակցություններ ։

8․ Մրցակցող ստորաբաժանումների միջեվ արդյունքների փոխանակում ըստ դեկադների, ամսերով ։

9․ Ստուգում չրջանցիկ բրիգադներով, թե ինչպես են մրցակցող ստորաբաժանումները կըռվում պայմանագրի կատարման համար ։

10․ Աշխատանքի փորձի փոխանակում (փոխադարձ պատվիրակություններ) ։

11․ Հանդիսական պլանի ստուգման համար համկցված էստաֆետի անցկացում վաշտի ներսում դասակների միջեվ և պայմանագրի կատարման ստուգման համար՝ մրցակցող վաշտերի միջեվ ։

12․ Մրցակցողների կողմից յերկկողմ վարժությունների անցկացում՝ ստուգելու համար մարտավարական պատրաստությունից պայմանագրի կատարումը ։

13․ Արդյունքների ամփոփում վաշտի ժողովում կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների կողմից և հանդիսական պլանների ու նրա կատարման արդյունքների փակցնելը զորամասի ակումբում ։

## ՄԱՐՏԻԿԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՈՐԻԵՆՏԻՐ ՍԽԵՄԱՆ ԴԵԿԱԴԻ ՀԱՄԱՐ

Նպատակը ․— Յուրաքանչյուր մարտիկ պետք է ․—



1․ Հաստատապես գիտենա դեկադի նպատակադրումները և նորմայի ցուցանիշները ։

2․ Ստանա դասակի հրամանատարից պատվեր (զակազ) սոցմրցակցության համար և ծավալի այդ մրցակցությունը (ձեվ № 4) ։

3․ Հաստատապես գիտենա պլանի կատարման արդյունքը և սոցմրցակցության պայմանագրերով պարտավորությունները ։

Ձեվերը ․—

### 1 ԴԵԿԱԴԱՅԻՆ ԺԱՄ

ա) Այն սովորքների ու գիտելիքների պատմելն ու ցույց տալը, վոր մարտիկը պետք է ձեռք բերի դեկադում ։

բ) Դասակի հրամանատարի պատվերը (զակազը) սոցմրցակցության համար, նորմայի ցուցանիշների մատնանշումով ։

գ) Մրցակցության պայմանագրեր կնքելը դասակների ու ջոկերի միջեվ ապահովելու համար հրամանատարի պատվերը ։

2․ Դեկադի պլանի ու դասակների և ջոկերի միջեվ կնքած պայմանագրերի կատարման ստուգում (մասսայական «մարտեր», կարճատեվ խորհրդակցություններ դասակներով ու ջոկերով, վորոնց պետք է հաջորդի վաշտի հրամանատարի յեզրակացությունը ։

3․ Դասակների պլանների փակցումը լենան-կյունում՝ նրանց կատարման ամփոփիչ նշումներով ։

# ՄԱՐՏԻԿԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՈՐԻԵՆՏԻՐ ՍԽԵՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐՎԱ ՀԱՄԱՐ

Նպատակը․— *Յուրաքանչյուր մարտիկ պետք է․*

*1․ Հաստատապես գիտենա, թե ինչ սովորքներ ու գիտելիքներ նա պետք է տանի վաշտը:*

*2․ Պատրաստվի դրանց յուրացման:*

*3․ Ապահովել դրանց կատարումը մրցակցությամբ ու հարվածայնությամբ:*

*4․ Հաստատապես գիտենա, թե ինչպես օգտագործել այդ գիտելիքներին ու սովորքներին և ինչպես կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:*

*5․ Վերացնել գոյացած պարտքերը:*

Ձևերը․

*1․ Դասակային տախտակ «Ինչ պետք է յես սովորեմ վաշտը», նորմայի ցուցանիշների նշումով (ձև № 1):*

*2․ Ուսումնական օրվա օրացուցակի առարկաներից գրականության ցուցահանդես:*

*3․ Խմբակային պատրաստության պարապմունքներին՝ հատուկ դրա համար հատկացված ժամանակում (լայնորեն գործադրելով կոնվեյերի սխեմը) հերթապահ հրամանատարի ղեկավարությամբ: Խմբակների ղեկավարներն են առաջավոր կարմիր բանակայինները:*

*4․ Կրտսեր հրամանատարների հրահանգավորում ու պարապմունքների ինքնապատրաստում. հրահանգավորմանը ներկա յեն նաև խմբակների ղեկավարները:*



*5․ Փորձնական մոբիլիզացիաներ (հերթապահ հրամանատարի կողմից ջոկի կամ դասակի պարապմունքներին պատրաստ լինելու ստուգումը):*

*6․ Մրցակցության խմբակային ու անհատական պայմանագրեր կնքելը:*

*7․ Յուրաքանչյուր վարժական ժամից հետո ամփոփ վերլուծում և անհատական պայմանագրերի կատարման գնահատական: Խմբական պայմանագրերի կատարման գնահատականն անում է դասակի հրամանատարը, վորից հետո այդ փակցվում է լենինյան անկյունում:*

*8․ Դասակային տախտակներ՝ «Մարտիկ, դու պետք է վերացնես ուսումնական օրվա քո պարտքը» և «Շեֆ, ովքեր յենթաշեֆից վերացնելու ուսումնական օրվա պարտքը» (ձև № 2 և 3):*

*9․ Տախտակ «Ահա մեր այսօրվա առաջավորները»:*

Ձև № 1

## Մարշիկ, ստացիր փաղփս առաջադրությունդ

| Ժամեր | Ինչ է անցնվում | Կոնտրոլ թվերը | Կատար-ված է | Ով է յետ մնացել |
|---|---|---|---|---|
| 7—9 | **Քաղպարապմունքներ**<br>Թեման՝ ԽՍՀՄ միջազգային դրությունը և Կարմիր բանակի խնդիրները: Նյութն է ծրագրի 1-ին համարը և «Պրավդա» թերթի դեկտեմբերի 12-ից: | | | |
| 9—10 | **Նախաճաշ** | | | |
| 10—12 | **Կայազորային ծառայություն**<br>Պահակների նշանակումն ու կազմը: Ժամապահի իրավունքներն ու պարտականությունները. այսինչ §§-ը: | | | |
| 12—14 | **Հրաձգային պատրաստություն**<br>1. Հրակի պատրաստվելը պառկած հենարանից:<br>2. Նշանառությունը հաստոցից, հրահանքի ստուգում իջեցման, նշանառության մարզանք:<br>3. Միաձև նշանառություն:<br>4. Հեռավորությունների վորոշելը մինչև 600 քայլ:<br>5. Հրաձգության մանրակալլեր և տարբերկրյա հրացաններով. Թիրախ № 6, տարածություն. 50 քայլ, փամփուշտ 5. Տարային կանոնադր. 2-րդ և 3-րդ մաս, այսինչ §§-ը:<br>Ֆիզպատրաստության վարժությունը դասընկերով առանց փայտերի: Դարձումներ տեղում և շարժվելիս: | | | |



Ձև № 2

## Մարշիկ, դու պետք է վերացնես մարտական ուսուցումից անեցածդ պարտքը

| Պարտապանի ազգանունը | Որն է քո պարտքը | Ինչ պետք է անես | Իսկ ինչ ես արել. պատասխանիր |
|---|---|---|---|
| ՍԻԴՈՐՈՎ | Դու վատ ես ուսումնասիրել արդյունաբերության վերաբերյալ հընգամյակի 2-րդ տարվա արդյունքները: | Մեկ օրյա ժամից հետո կարդա «Կրասնայա Զվեզդա» № 298-ում «2-րդ տարվա արդյունքներն արդյունաբերությունում»: | Ցես 20 րոպե կարդացի «Կրասնայա Զվեզդա»: Պարտքս վերացրի: Սիդորով. |
| ՊԵՏՐՈՎ | Դու չգիտես հրացանի փականքի գլխավոր մասերը: | Այսօր նյութական մասի պարապմունքի ժամին, մարքի փականքի մասերը և կրտսեր հրամանատարի օգնությամբ ուսումնասիրիր այն: | Մեկ օրյա ժամից հետո յերեք նյութական մասի պարապմունքը: Փականքը լավ գիտեմ: Պետրով. |

Զէ № 3.

Մարտիկ, քո պարտականությունն է օգնել ընկերոջդ վերացնելու որևէ պակասը

| Ում ում պետք է օգնի | Ինչի մեջ օգնի | Ինչ եք դուք արել, պատասխանեցեք |
|---|---|---|
| ԿԱՐՊՈՎԸ ՖԵԴՈՐՈՎԻՆ | Սովորեցնել պլենումի որոշումները՝ արդյունաբերությունից 5-ամյակի երրորդ տարվա արդյունքների մասին. | Կարդացինք «Կրասնայա Զվեզդա» № 296. Ֆեդորովը արդյունաբերության երրորդ տարվա արդյունքները յուրացրել է լավ: Կարպով, Ֆեդորով. |
| ԻՎԱՆՈՎԸ ՍՈԿՈԼՈՎԻՆ | Սովորեցնել փականքի գլխավոր մասերը: | Կրտսեր հրամանատարի թույլտվությամբ ու հսկողությամբ մի ժամով փականքը բերինք մարտկոցը, քանդեցինք, և Սոկոլովը փականքի մասերը լավ ուսումնասիրեց: Իվանով, Սոկոլով. |



Զէ № 4

# ԴԱՍԱԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՏՎԵՐԸ

Սոցիալիստական մրցակցության միջոցով չորրորդ դեկադում դասակին ձեռք բերել.

— Անկյունների չափում՝ մատներով ու հեռադիտակով 15 վայրկյանում, բուսոլով ու ստերեոխողովակով՝ 25 վայրկյանում:

— Որոշել նշանի ազիմուտը 25 վայրկյանում:

— Քարտեզը կողմորոշել կողմնացույցով 40 վայրկյանում:

Ցել այդպես դեկադային պլանի բոլոր դիսցիպլինաներից:

# ՑԱՆԿ


| | | Եջ |
|---|---|---|
| 1. | Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Հեղ.-Ռազմ. Խորհրդի վորոշում № 9 . . . . . . . . . | 3 |
| 2. | ԿԿԲ-ի հարվածայինների 2-րդ հավաքի բանաձևը ընկ. Ամոյինի զեկուցման առթիվ . . . . . | 5 |
| 3. | ԿԿԲ-ի հարվածայինների 2-րդ հավաքի դիմումը Բաքվի բանվորներին . . . . . . . . . | 33 |
| 4. | Զորքերի ժամանակավոր հրամանատար ընկ. Ամոյինի յեզրափակման խոսքը հարվածայինների հավաքում | 39 |
| 5. | ԿԿԲ Քաղվարչության պետ. ընկ. Իպպոյի յեզրափակման խոսքը հարվածայինների հավաքում . | 43 |
| 6. | Մարտիկին պլանը հասցնելու որիենտիր սխեման աստիճանի համար . . . . . . . . . . | 51 |
| 7. | Մարտիկին պլանը հասցնելու որիենտիր սխեման դեկադի համար . . . . . . . . . . | 52 |
| 8. | Մարտիկին պլանը հասցնելու որիենտիր սխեման ուսուցման որվա համար . . . . . . . . | 54 |
| 9. | Ձև № 1. Մարտիկ, ստացիր վաղվա առաջադրությունը . . . . . . . . . . . . . | 56 |
| 10. | Ձև № 2. Մարտիկ, դու պետք է վերացնես մարտական ուսուցումից ունեցածդ պարտքը . . . . | 57 |
| 11. | Ձև № 3. Մարտիկ, քո պարտականությունն է օգնել ընկերոջդ վերացնելու որվա պարտքը . . | 58 |
| 12. | Ձև № 4. Դասակի հրամանատարի պատվերը . . . | 59 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0225017

40.902